«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԱՇԻՆՔԻ
ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Սիրելի՛ երևանցիներ,
հարգելի՛ ընտրող,

«Մայր Հայաստան» դաշինքը ներկայացնում է այն սկզբունքային մոտեցումները, որոնց հրատապ իրականացումը հնարավոր կդարձնի մեր երկրի առջև ծառացած գոյաբանական խնդիրների հաղթահարումը, Հայաստանի և Արցախի համար անվտանգային միջավայրի, բոլոր կենսական ոլորտներում կայուն զարգացման ապահովումը՝ ազգային հենքով համակարգերի ձևավորման միջոցով:

1. **Ամբողջական իշխանափոխության հրամայականը.**

Գործող կառավարությունը կորցրել է իր իրավաքաղաքական լեգիտիմությունը՝ ի թիվս այլ քայլերի՝ խախտելով ՀՀ օրենսդրությունը, 2021 թ.-ի արտահերթ խորհրդարանական ընտրություններում ներկայացրած իր իսկ նախընտրական ծրագրի դրույթները:

Արցախն Ադրբեջանի մաս ճանաչելու՝ օրվա իշխանությունների ոչ լեգիտիմ քաղաքականությունը նրանց դրել է օրենքից դուրս կարգավիճակում: Վարվող քաղաքականությունն անընդունելի է, հանգեցնում է ահագնացող սպառնալիքների մեր անվտանգությանը, ինքնությանն ու գոյությանը: Առանց գործող վարչախմբի հեռացման անհնար կլինի նախաձեռնել արտահերթ խորհրդարանական ընտրությունների անցկացում, ինչը հնարավորություն կտա ձևավորել ազգային իշխանություն, որն էլ կունենա լիարժեք իրավունք խոսել և գործել ժողովրդի անունից՝ ի շահ Հայաստանի ու Արցախի:

Համապետական մասշտաբով իշխանափոխության գործընթացը պետք է մեկնարկի Երևան քաղաքի ավագանու ընտրություններով: Ամբողջական իշխանափոխության գործընթացի համար անհրաժեշտ է քանդել հակապետական իշխանության հենարանները, որպեսզի նա զրկվի վարչական ռեսուրսներն ապօրինի օգտագործելու միջոցներից: Դրա առաջին հնարավորությունը Երևան քաղաքի ավագանու ընտրություններն են:

2. **Հայաստանի և Արցախի անվտանգային միջավայրի վերականգնում.**

Հայաստանի և Արցախի Հանրապետությունների անվտանգության ու կայուն զարգացման հիմնական գրավականը ***Հայոց բանակի հզորացումն*** է՝ նրա հեղինակության բարձրացման, փորձառու մասնագետների ներգրավման, ժամանակակից ռազմական գործողությունների առանձնահատկություններից բխող ռազմավարության ձևավորման ու, ըստ այդմ, բարեփոխումների իրականացման, սպառազինությունների պաշարի արդիականացման ու թարմացման, վետերանների և նրանց կարիքների հանդեպ վերաբերմունքի փոփոխության միջոցով:

Բնական դաշնակիցների հետ ներկայիս խեղված հարաբերությունների վերանայումը կբերի հայ-ռուսական ռազմավարական-դաշնակցային հարաբերությունների վերականգնմանը և խորացմանը:

Հայ-իրանական տնտեսական ու քաղաքական հարաբերությունները պետք է բարձրացնել նոր որակի: Ձևավորել ռազմաքաղաքական գործակցության համակարգ:

Պետք է հասնել Հնդկաստանի, Չինաստանի հետ խորացված հարաբերությունների հաստատմանը:

Բարեկամ Ֆրանսիայի հետ կապերի արդյունավետության բարձրացումը և այդ երկրի հնարավորությունների օգտագործումն արևմտյան աշխարհում ի նպաստ մեզ անհրաժեշտություն է:

Պետք է մեր երկրի շահերից բխող գործընկերային հարաբերությունները զարգացնել ԱՄՆ–ի, ինչպես նաև հայաշատ համայնքներ ունեցող երկրների հետ:

3. **Արցախի պաշտպանություն.**

Արցախի ***պաշարումը վերացնելու*** առաջնային քայլ պետք է դիտվի 2020թ. նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության դրույթների իրականացումը, որոնք ամբողջովին խախտվել են Ադրբեջանի կողմից՝ ՀՀ իշխանությունների գործուն մասնակցությամբ: Այդ հայտարարությունը փաստացիորեն խմբագրվել է 2022 թ. հոկտեմբերի 6-ին՝ Պրահայում, ինչն էլ հնարավորություն է տվել Ադրբեջանին պաշարել Արցախը՝ այն լիարժեքորեն լուծարելու

և բնաջնջման ենթարկելու իր անթաքույց ծրագրերի իրականացմանը հասնելու նպատակով:

Հայաստանն Արցախին կապող միջանցքի չբացվելու պարագայում կկորցնենք Արցախը, և Ադրբեջանը հնարավորություն կստանա սպառնալ Հայաստանի ինքնիշխանությանը, տարածքային ամբողջականությանը: Այդ նպատակով պետք է կիրառվի Հայաստանին հասու ողջ գործիքակազմը, այդ թվում՝ «պաշտպանելու պատասխանատվություն» միջազգային սկզբունքից բխող բոլոր գործողությունները:

Հմուտ արտաքին ու ներքին քաղաքականության միջոցով պետք է խուսափել Արևմուտք-Ռուսաստան և Արևմուտք-Իրան ***բախման թատերաբեմ դառնալուց***:

4. **Հանրային մթնոլորտի առողջացում.**

Վերջ դնել ***հանրության պառակտման քաղաքականությանը***: Սև-սպիտակ, նախկին-ներկա, ռուսամետ-արևմտամետ, հարուստ-աղքատ, հայաստանցի-ղարաբաղցի բաժանումները թուլացնում են ազգային դիմադ-րողականությունը՝ սասանելով մեր պետության հիմքերը: Այն թույլ չի տալիս բարերար մթնոլորտ ստեղծել ներառական բանավեճերի ծավալման և հանրությանը հուզող, պետության համար կենսական խնդիրների լուծման նպատակով լավագույն մոտեցումների ձևավորման համար:

Հանրության տարբեր շերտերի համար մշակել և ներդնել կրթա-դաստիարակչական ծրագրեր, հիմնված ազգային արժեքների և նվիրյալ ու պատասխանատու քաղաքացի ձևավորելու սկզբունքների, հանրության տարբեր ներկայացուցիչների, հատկապես՝ խոցելի խմբերի հանդեպ հարգանքի ու հոգատար վերաբերմունքի վրա:

5. **Տնտեսության զարգացում.**

Առաջիկա 10 տարում պետք է ձգտել հասնելու ***տնտեսության զարգացման*** այնպիսի տեմպերի, որը մի կողմից, կօժանդակի միջին խավի ընդլայնմանը, մյուս կողմից՝ կհանգեցնի ՀՆԱ-ի ավելացմանը մի քանի անգամ: Այդ նպատակով անհրաժեշտ է կառավարության կողմից ներքին

խթանող քաղաքականության իրականացում, որի անբաժան մասը պիտի լինի հայկական սփյուռքի հետ տնտեսական, մշակութային ու քաղաքական ինտեգրման ռազմավարությունը: Հայաստանի տնտեսական հզորացման նպատակով անհրաժեշտ է մեր երկիրը աշխարհի հայության համար դարձնել տնտեսական, ֆինանսական ու մշակութային գործունեության նախընտրելի միջավայր և զբոսաշրջային կենտրոն:

Հայաստանի ***<u>բանկային համակարգը</u>*** պետք է վարի ցածր տոկոսադրույքներով վարկերի քաղաքականություն՝ դրանք ուղղելով տնտեսական զարգացման առաջնային ուղղություններին: Տնտեսական աճը պետք է դառնա ներառական, այլ ոչ թե սպասարկի 1-2 ոլորտի գերշահույթները:

6. **Հարկային աջակցություն բիզնես-դաշտի և տեղական ինքնակառավարման մարմինների համար.**

Ավելացված արժեքի հարկման դաշտում գործող բիզնեսի համար այն իջեցնել մինչև **<u>17 տոկոս</u>**:

Շահութահարկի չափը դարձնել **<u>14 տոկոս</u>**:

Այս առաջարկներն արվում են՝ հաշվի առնելով ինչպես բիզնեսի զարգացման անհրաժեշտությունը, այնպես էլ հարևան երկրների բիզնես-միջավայրերի առանձնահատկությունները, մեզ համար մրցակցային առավելություններ ապահովելը:

Հանրային ֆինանսների ներկա համակարգը ձևավորվել է այնպիսի ժամանակներում, երբ տեղական ինքնակառավարումը գտնվում էր պետական հովանավորչության տակ: Մինչդեռ հիմա հանրային ֆինանսների բաշխումը պետք է կատարվի՝ խուսափելով պետական (կենտրոնական իշխանությունների) հովանավորչությունից, ինչպես քաղաքակիրթ աշխարհում, այն է՝ գործարար միավորների պետական հարկերի (ԱԱՀ, շահութահարկ, եկամտահարկ, շրջանառության հարկ) մի մասը (20-40%) պետք է ուղղվի այն համայնքի բյուջե, որտեղ գրանցված է այդ ընկերությունը: Այդ ժամանակ հնարավոր կլինի իրականացնել դոտացիաների հանրահայտ համահարթեցման սկզբունքը՝ հարուստ համայնքներից դեպի կարիքավոր համայնքներ:

7. **Արտոնյալ կարգավիճակ փոքր բիզնեսին.**

Տարեկան մինչև 30 միլիոն դրամ շրջանառություն ունեցող տնտեսվարողները կազատվեն շրջանառության հարկից:

Տարեկան մինչև 180 միլիոն դրամ շրջանառություն ունեցողները կհարկվեն 1 տոկոսի չափով:

Հարկային բեռի մեղմման այս մոտեցումը վերաբերում է նաև փոքր բիզնեսի այլ ներկայացուցիչներին՝ տաքսիների վարորդներին, ինքնազբաղվածներին և այլն:

8. **Սոցիալական քաղաքականություն.**

Հայաստանում ***նվազագույն աշխատավարձը*** պետք է հասցնել 120 000 դրամի:

Գնաճին զուգահեռ՝ պետական աշխատողների աշխատավարձերը, ինչպես նաև նվազագույն աշխատավարձի չափը և կենսաթոշակները պետք է ինդեքսավորվեն ըստ այդ ցուցանիշի:

9. **Սոցիալական աջակցություն կենսաթոշակառուներին և խոցելի այլ խմբերին**

Նվազագույն կենսաթոշակի չափ սահմանել 80.000 դրամը՝ այն համարժեք դարձնելով նվազագույն սպառողական զամբյուղին:

Երևան քաղաքում ***հանրային տրանսպորտի*** բոլոր միջոցներից թոշակառուները և հաշմանդամություն ունեցող անձինք պետք է օգտվեն անվճար:

Ընդլայնել անվճար ***առողջապահական*** ծառայությունների շրջանակը: Բարելավել առաջնային առողջապահական կենտրոնների վիճակը և ժամանակակից սարքավորումներով հագեցվածությունը՝ քաղաքացիների համար առավել որակյալ առողջապահական ծառայությունների մատուցման նպատակով:

10. Արդիականացված Երևան

- Փոխել մայրաքաղաքի ***կառավարման որակը***՝ ներդնելով «խելացի քաղաքի» մոդելը:
- Երևանի ***կառավարման համակարգն*** առավել արդյունավետ դարձնելու և միանձնյա թելադրանքից զերծ պահելու նպատակով անհրաժեշտ է վերանայել դրա ձևավորման կարգը՝ հաշվի առնելով հակակշիռների սկզբունքը: Քաղաքապետը պետք է առաջնային մանդատ ստանա ընտրողներից, այլ ոչ թե՝ ավագանու միջնորդությամբ դառնա մայրաքաղաքի ղեկավար: Դա հնարավորություն կտա մի կողմից նվազեցնել կախվածությունը կենտրոնական իշխանություններից և կմեծացնի քաղաքապետի ինքնուրույնության աստիճանը, մյուս կողմից՝ առավել կշռադատված ու ներառական որոշումներ կայացնել՝ ավագանու հետ քննարկումների արդյունքում:
- Արմատապես փոխել քաղաքի ***տրանսպորտային համակարգը***՝ քաղաքացու համար առավել ճկուն, կանխատեսելի ու դյուրացված դարձնելով: Անհրաժեշտ է ներդնել միասնական տոմսակի համակարգ՝ օրական, շաբաթական ու ամսական կտրվածքով: Պետք է ներդրվի հանրային ու վճարովի կայանատեղերի համակարգ, որը կազատի փողոցները ճամփեզրի կայանումներից առաջացող խցանումներից:
- Արմատապես պետք է փոխվի ***աղբահանության համակարգը***՝ ներդնելով տարանջատված աղբի հավաքման սկզբունքը, դրա համար առավել արդյունավետ լուծումներ առաջարկելով: Աղբահանության ժամանակացույցի փոփոխությունը պետք է հաշվի առնի քաղաքային երթևեկության առանձնահատկությունները: Անհրաժեշտ է ներդնել աղբի վերամշակման ժամանակակից համակարգ:
- Վերանայել Երևան քաղաքում ***ճանապարհների*** նորոգմանը ներկայացվող մոտեցումները և պահանջները թե՛ որակական առումով, թե՛ քաղաքում իրականացվող շինարարական աշխատանքների ու կոմունալ ծառայությունների նորոգումների ժամանակացույցը հաշվի առնելով: Ճանապարհների հարցը պետք է հիմնարար, այլ ոչ թե կոսմետիկ լուծում ստանա:
- Պետք է վերջ դնել Երևանը «բետոնի անտառի» վերածելու քաղաքականությանը՝ առաջնային դիտարկելով կանաչ ***քաղաքային տնտեսվարման***

սկզբունքները, որը ներառում է նաև էներգախնայողական ու բնապահպանական մոտեցումների ներառումը ռազմավարության մեջ, կանաչ գոտիների ընդլայնումը՝ շեշտադրելով նաև բակային տարածքների բարեկարգումն ու կանաչապատումն այդ հաշվարկներով ևս:

- ***Սեյսմիկ ռիսկերի նվազեցման*** նպատակով անհրաժեշտ է մշակել և ներդնել Երևան քաղաքի մի քանի հազար բազմաբնակարան շենքերի սեյսմակայունության բարձրացման երկարաժամկետ ծրագիր՝ ռետինեմետաղական բարձիկների ու ճկուն հարկերի տեխնոլոգիաների համալիր կիրառմամբ:
- Բնակչության քաղաքացիական պաշտպանվածության բարձրացման նպատակով, անհրաժեշտ է մշակել և ներդնել ***ապաստարանների*** համալիր ծրագիր՝ համապատասխան չափորոշիչների սահմանմամբ, որը կապահովի բնակչության անվտանգությունը բնական աղետների և հնարավոր ռազմական գործողությունների ժամանակ:
- Պետք է վերանայել Երևանի քաղաքապետարանի՝ հանրության հետ հարաբերվելու ***աշխատելաոճը***՝ ապահովելով քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակիցների կողմից պարտականությունների պատշաճ և օպերատիվ կատարումը, զերծ պահելով երևանցիներին իրենց հարցերի ու խնդիրների դիտարկման և լուծման առումով անհարկի ուշացումներից ու անթույլատրելի անտեսումներից:
- Ակտիվ աշխատանք իրականացնել ***թմրանյութերի*** թաքնված ու բացահայտ ***գովազդի վերացման*** ուղղությամբ: Օգտագործել քաղաքապետարանի տեխնիկական և մարդկային ռեսուրսները թմրանյութերի շրջանառության գովազդման դեպքերը ***բացահայտելու և իրավապահներին ներկայացնելու*** համար: Իրականացնել ***կրթադաստիարակչական միջոցառումներ*** երիտասարդների մասնակցությամբ՝ ընդդեմ թմրանյութերի գործածման ու տարածման:

. . .

Սիրելի՛ երևանցիներ, հարգելի՛ ընտրող,
Միացի՛ր «Մայր Հայաստան» դաշինքին:
Միացի՛ր, որ փոխենք: